ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2024 թվականի N 1872

ՆԱՐԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 29 նոյեմբերի 2023 թվականի թիվ 48, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 հունիսի 2024 թվականի թիվ 1323 որոշումները, համայնքապետարանի մրցութային հանձնաժողովի՝ հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին 25 հուլիսի 2024 թվականի թիվ 5 արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 48-րդ հոդվածի 4-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **որոշում եմ.**

1.Վանաձոր գյուղ Գուգարք 0,07452հա մակերեսով, 06-031-0303-0034 ծածկագրով, թիվ 27032024-06-0027 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող հողամասը, 5 տարի ժամկետով, 244 (երկու հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, տրամադրել 2024 թվականի հուլիսի 25-ին Վանաձորի համայնքապետարանում անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Նարինե Աղաջանյանին:

2. Նարինե Աղաջանյանի հետ մեկամսյա ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1873

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 1772 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 11-ի <<Վանաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> թիվ 1772 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1874

ՀԱՄԼԵՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտի առարկան (նկարագրական մաս).

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում 18.07.2024թ. ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված զեկուցագրի և արձանագրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ)կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը (պատճառաբանական մաս).

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 18.07.2024 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանը (բնակության հասցե՝ ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փ. 1 շենք, 218 բն.) ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց թիվ 1 շենքի 218 բնակարանի շենքի շքամուտքի երկաթբետոնե ծածկի վրա ինքնակամ կառուցել է շինություն:

2024 թվականի հունիսի 18-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի օգոստոսի 01-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանը պատշաճ ծանուցվել, սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել: Հիմք՝ 20.07.2024թ. ստացված փոստային անդորրագիր:

09.08.2024թ. ՀՀ Կադաստրի կոմիտե հարցման արդյունքում ստացված թիվ ԱՏ-09082024-06-0205 տեղեկանքի համաձայն, ք. Վանաձոր Վ. Համբարձումյան փ., թիվ 1 շ. 218 բնակարան հասցեի անշարժ գույքը համաձայն թիվ 1224530 վկայականի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է՝ Համլետ Տեր-Պողոսյանին, Գայանե Մատինյանին, Աշխեն Տեր-Պողոսյանին, Հասմիկ Տեր-Պողոսյանին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակահիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակահիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրհինգապատիկից հազարհինգհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանին տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3.Պարտավորեցնել Համլետ Գարեգինի Տեր-Պողոսյանին մեկամսյա ժամկետում ապամոնտաժել ք. Վանաձոր, Վ. Համբարձումյան փողոց թիվ 1 շենքի 218 բնակարանի շենքի շքամուտքի երկաթբետոնե ծածկի վրա ինքնակամ կառուցած շինությունը և բերել նախկին տեսքի:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5.Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է բողոքարկվել վարչական կարգով Վանաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր Կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1875

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5-4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5-4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱՐԱ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 5-4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱՐԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒՓՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարա Սերյոժայի Անտոնյանի 02.07.2024 թվականի թիվ 02/11398 դիմումը, անշարժ գույքի սեփականության օգտագործման իրավունքի գրանցման թիվ 1263767 վկայականը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13072017-06-0023 վկայականը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 233-րդ որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Փոխել Վանաձոր քաղաքի, Թումանյան փողոց 5-4/1 հասցեում գտնվող, Նարա Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող 85.79քմ մակերեսով տարածքի նպատակային նշանակությունը բնակելիից՝ հասարակականի:

2.Միավորել Վանաձոր համանք Վանաձոր քաղաքի, Թումանյան փողոց թիվ 5-4/1 և Թումանյան փողոց 5-4/2 հասցեներում գտնվող Նարա Սերյոժայի Անտոնյանին սեփականության իրավունքով պատկանող 146.64քմ ընդհանուր մակերեսով տարածքը՝ համաձայն «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Թումանյան փողոց, 5 շենք, 50 ատամնաբուժարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1876

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐԻԿ ՍԱՄՎԵԼԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհարիկ Սամվելի Սիմոնյանի (ծնված՝ 22.11.1968թ.) 31.07.2024թ. թիվ 02/13091 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 31.07.2024թ. տրված թիվ 5175 (նոտարական ակտի կոդ: 594-20240731-66-8185553), թիվ 5176 (նոտարական ակտի կոդ: 594-20240731-66-8185532), թիվ 5177 (նոտարական ակտի կոդ: 594-20240731-66-8185513) հայտարարությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 31.07.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-255/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոց թիվ 17 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 333.81քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1989թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 333.81քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1989թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Գոհարիկ Սամվելի Սիմոնյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոց թիվ 17 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 333.81քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության շինության նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոց թիվ 17 (պայմանական) հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Հյուսիսային փողոց, թիվ 17/4 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1877

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԷԴՄՈՆ ԹԱԴԵՎՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդմոն Թադևոսի Հարությունյանի (ծնված՝ 19.06.1980թ.) թիվ 02/22154 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 16.07.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-235/24 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 22.07.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024U5KUDX), ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 01.08.2024թ. թիվ 4412 (նոտարական ակտի կոդ՝ 741-20240801-88-8190066), թիվ 4432 (նոտարական ակտի կոդ՝ 741-20240801-88-8190071), թիվ 4433 (նոտարական ակտի կոդ՝ 741-20240801-88-8190067) հայտարարությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 11 հասցեի արևելյան մասում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 155.2քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1999թ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 155.2քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1999թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Ճանաչել Էդմոն Թադևոսի Հարությունյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 11 հասցեի արևելյան մասում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 155.2քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3.Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 11 հասցեի արևելյան մասում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Հ.Ներսիսյան փողոց, 14/8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1878

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.05.2023Թ. ԹԻՎ CPP0-0000-6144
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԵՎ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բուրաստան Լևոնի Բաղբուդարյանի ներկայացուցիչ, փաստաբան Մանե Ալբերտի Գրիգորյանի 19.07.2024թ. թիվ 01/12406 դիմումը, 25 հունիսի 2024թ. ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ6/0570/05/24 վարչական գործով որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

Կասեցնել Վանաձոր համայնքի Աղայան փողոց թիվ 54 հասցեում գտնվող բնակելի տան համար տրված Վանաձոր համայնքի ղեկավարի 18.05.2023թ. թիվ CPP0-0000-6144 շինարարության թույլտվությունը և դադարեցնել շինարարական աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1879

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԶՈՐ. ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովհաննես Անդրանիկի Մինասյանի լիազորված անձ Նոննա Հովիկի Մեժունցի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21032013-06-0500 վկայականը, 16.04.2024թ. տրված թիվ 2321 (նոտարական ակտի կոդ: 594-20240423-67-7889731) լիազորագիրը, «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ի կողմից 10.06.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց 40 հասցեում գտնվող, Հովհաննես Անդրանիկի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 0.027հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Զոր. Անդրանիկի փողոց 40 հասցեում գտնվող, Հովհաննես Անդրանիկի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող 141,51քմ մակերեսով բնակելի տան գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ խնամքի և զարգացման կենտրոն:

3.Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1880

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐՊԱՍ ԳՅՈՒՂԻ, 6-ՐԴ ՓՈՂՈՑ, 7-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, 13 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-033-0058-0008 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Սենիկի Դոդոռյանի (ծնված՝ 24.02.1970թ.) 15.05.2024թ. թիվ 02/8724 դիմումը, 06 մայիսի 2024 թվականի ՀՀ Լոռու մարզ Վանաձոր համայնք գյուղ Դարպասի քաղվածքը, 06.05.2024թ. Դարպաս գյուղի վարչական ղեկավարի կողմից հաստատված քաղվածքը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրամադրած հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Հաստատել Վանաձոր համայնքի, Դարպաս գյուղի, 6-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 13 (պայմանական) հասցեում գտնվող 0.12143հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Վերականգնել Ալվարդ Սենիկի Դոդոռյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Դարպաս գյուղի, 6-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 13 (պայմանական) հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.12143հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Դարպաս, 6-րդ փողոց, 7-րդ նրբանցք, 13 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1881

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Բ. ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 46 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդմոն Աշոտի Հարությունյանի 26.01.2024թ. թիվ 02/1798 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 03.07.2024թ. «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 77գ-18830 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20236D3FCA), 13.05.2024 թվականի Վանաձորի համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Բ.Կնունյանց փողոցի, թիվ 46 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 20.87քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Բ.Կնունյանց փողոցի, թիվ 46 շենքի արևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Բ.Կնունյանց փողոց , 46/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 օգոստոսի 2024 թվականի N 1882

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1711 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1538 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դերենիկ Ցոլակի Մազմանյանի 23.07.2024թ. թիվ 02/12614 դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1711 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 18 ապրիլի 2024 թվականի թիվ 950 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 18.07.2024թ. թիվ Կ-18072024-06-0234 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 05 դեկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 16 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շինությունների նկատմամբ Դերենիկ Ցոլակի Մազմանյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1711 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1.Որոշման նախաբանը և 1-ին կետը «5 տնատիրությունների միջև» բառերից հետո լրացնել «(Լազյան փողոց թիվ 16 Արսեն Եթիմյան, Լազյան փողոց թիվ 16 Անյա Արաբաչյան, ով հանդիսանում է Էմմա Իվանի Արաբաչյանի ժառանգը՝ ըստ 26.04.2005թ. տրված կտակի, Լազյան փողոց թիվ 16-1/5 Նարինե Կարդալյան, Լազյան փողոց թիվ 16 Իլյիչ Արաբաչյան և Լազյան փողոց թիվ 16/1 Դերենիկ Մազմանյան) հավասար բաժիններով)» բառերով:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 10 հուլիսի 2024 թվականի «Վանաձորի համայնքի ղեկավարի 05 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1711 որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 1538 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024 թվականի N 1883

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ 15/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԱՀԻՏ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Ալավերդու Սարգսյանի 26.07.2024 թվականի թիվ 02/12837 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18072024-06-0042 վկայականը,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1.Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 15/7 հասցեում գտնվող, Անահիտ Ալավերդու Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն Գասպար Վեքիլյան ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 15/7 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա.0.00601 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 29.68 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մարշալ Բաղրամյան պողոտա, 15/7 խանութ:

բ.0.00586 հա մակերեսով հողամասին և նրա վրա գտնվող 23.48 քմ մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մարշալ Բաղրամյան պողոտա, 15/8 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024 թվականի N 1884

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 60 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Ասատուրի Ներկարարյանի 02.02.2024թ. թիվ 02/2330 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 10.07.2024թ. «ՌԻԳ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 94գ-18830 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 31.12.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023NMWAV), 13.05.2024 թվականի Վանաձորի համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տ. Չուխաջյան փողոցի, թիվ 60 շենքի հյուսիսարևելյան մասում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 29.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 31.3քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի, Տ. Չուխաջյան փողոցի, թիվ 60 շենքի հյուսիսարևելյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տ. Չուխաջյանի փողոց , 60/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024 թվականի N 1885

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3-4/7 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 3-4/7 հասցեին կից գտնվող 0,00530հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Նաիրիի փողոց, 3/14 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2024 թվականի N 1886

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված թիվ 1 հավելվածի 8.4-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 14 օգոստոսի 2024թ. անցկացվող մրցույթների մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հայկ Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 13
ք.Վանաձոր

14/08/2024
11:00

13/08/2024 10:53:31 A
Առաջատար պաշտոններ գլխ. մասնագետ (ծածկագիր՝ խմբ-2_240814_1100)

Հավելված թիվ
Վանաձոր համայնքի
ղեկավարի պաշտոնակատարի
«13» օգոստոս 2024թ.
թիվ որոշում

1) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-23)
2) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-28)
3) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-29)
4) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-30)
5) Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-31)

Հանձնաժողովի կազմը

Լիլյա Վահագնի Դավթյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ

Արմեն Այվազյան
Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետ

Արտաշես Աղլոյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Լոռու մարզպետի աշխատակազմի կառավարման փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կառավարիչ

Դավիթ Ստեփանյան
Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի ավագ մասնագետ

Կարեն Լևոնի Դավթյան
Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ դասախոս
Այլ տվյալներ՝ Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ

Աննա Սամվելի Դեմիրխանյան
Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ ՀԱՄԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2024 թվականի N 1887

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5-2-1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Սանկտ-Պետերբուրգի փողոց թիվ 5-2-1 հասցեին կից գտնվող 0.00440հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Սանկտ-Պետերբուրգի փողոց, 5/7 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2024 թվականի N 1888

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 20 ՓՈՂ ԹԻՎ 1Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Սեյրանի Համազասպյանի 31.07.2024 թվականի թիվ 13151 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1879583 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տավրոս 20 փող թիվ 1բ հասցեում գտնվող շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 20-րդ փողոց, 1/2 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 14
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2024 թվականի N 1889

ԱՐՇԱԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Արշակ Սերյոժայի Թումանյանի վարչական բողոքը՝ 08 հուլիսի 2024 թվականին Վանաձոր համայնքի Կ.Դեմիրճյան փողոցի 32-2 հասցեի հարևանությամբ հարավային հատվածում, որը սեփականության իրավունքով պատկանում է Նարինե Վանյանին, ինքնակամ կառուցած շինության ապամոնտաժման մասին թիվ 1528 որոշումը վերացնելու կապակցությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձոր համայնքի Կ. Դեմիրճյան 32-2 հասցեի հարևանությամբ հարավային հատվածում , որը սեփականության իրավունքով պատկանում է Նարինե Վարազդատի Վանյանին / տարածքը մտնում է շենքի ընդհանուր ծավալի մեջ/ օգտագործվում է Արշակ Սերյոժայի Թումանյանի կողմից, անհրաժեշտություն է առաջացել քանդել /ապամոնտաժել/ վերոգրյալ հասցեում գտնվող շինությունը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 08 հուլիսի 2024 թվականին ընդունվել է Կ.Դեմիրճյան փողոցի 32-2 հասցեի հարևանությամբ հարավային հատվածում, որը սեփականության իրավունքով պատկանում է Նարինե Վանյանին, ինքնակամ կառուցած շինության ապամոնտաժման մասին թիվ 1528 որոշումը:

12.07.2024թ. Արշակ Սերյոժայի Թումանյանը ներկայացրել է վարչական բողոք՝ 08 հուլիսի 2024 թվականինթիվ 1528 որոշումը վերացնելու կապակցությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում: Սահմանված ժամկետում Արշակ Մելոյանը ներկայացրել է վարչական բողոքը:

Վարչական բողոքի հիման վրա Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: 2024 թվականի օգոստոսի 14-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել է Նարինե Վանյանը իսկ Արշակ Թումանյանը պատշաճ ծանուցվել սակայն վարչական վարույթի լսումներին չի ներկայացել (ծանուցման հետադարձ կտրոն թիվ AL0123620284AL): Նարինե Վանյանը վարույթի լսումների ժամանակ հայտնեց իր դժգոհությունը, որ նշված ինքնակամ կառույցը անհարմարություն է ստեղծում իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը տիրապետելու համար:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1.Արշակ Սերյոժայի Թումանյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության

հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 օգոստոսի 2024 թվականի N 1890

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՆՎԵՐ ՄԱՅԻՍ ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարո Բաղիշի Երանոսյանի դիմումն անչափահաս Նվեր Մայիսի Ջհանգիրյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 10-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 7, կետ 3), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Մաշտոցի փողոցի թիվ 55ա տան բնակիչ Մարո Բաղիշի Երանոսյանին (ծնված՝ 30.07.1969թ., անձնագիր՝ AS 0237092, տրված՝19.06.2018թ., 055-ի կողմից, հաշվառված է՝ Լոռու մարզի Չկալով գյուղի թիվ 3 փողոցի թիվ 85 տուն) նշանակել անչափահաս Նվեր Մայիս Ջհանգիրյանի (ծնված՝ 07.09.2010թ., ծննդյան վկայական՝ԱԲ 124792, տրված՝ 26.04.2011թ., ՔԿԱԳ Վանաձորի տ/բ-ի կողմից) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամանակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. օգոստոսի 16
ք.Վանաձոր